ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 18-Ա

«ԷՔՍՊՈ-2027» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Սերբիայի Հանրապետության Բելգրադ քաղաքում կայանալիք «Խաղ հանուն մարդկության. Սպորտ և երաժշտություն բոլորի համար» խորագրով «ԷՔՍՊՈ-2027» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցությունն ապահովելու նպատակով՝

1. «ԷՔՍՊՈ-2027» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության կազմակերպման աշխատանքների ընդհանուր համակարգման նպատակով հանձնակատար նշանակել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանին (այսուհետ՝ հանձնակատար):

2. «ԷՔՍՊՈ-2027» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության կազմակերպչական աշխատանքների իրականացնող նշանակել «Մշակույթի զարգացման» հիմնադրամը (համաձայնությամբ):

3. Հանձնակատարին՝

1) ապահովել «ԷՔՍՊՈ-2027» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության կազմակերպման աշխատանքների համակարգումը.

2) Սերբիայի Հանրապետության Բելգրադ քաղաքում կայանալիք «ԷՔՍՊՈ-2027» համաշխարհային ցուցահանդեսի լիազոր մարմնի հետ մինչև 2026 թվականի հունվարի 20-ը կնքել համապատասխան պայմանագիր.

3) 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանագիրը կնքելուց հետո ապահովել «ԷՔՍՊՈ-2027» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի մշակումը՝ ներառելով ֆինանսական գնահատականը և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը.

4) մինչև ցուցահանդեսի բացումը՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն «ԷՔՍՊՈ-2027» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

4. Պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուրն իր գերատեսչության մասով՝ ապահովել «ԷՔՍՊՈ-2027» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության նախապատրաստման և կազմակերպման գործընթացի իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ